



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

2 April 2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Արդեն լսած կլինեք, որ նահանգապետ Նյուտոմն առաջարկեց, որ ուսումնական տարվա վեջին շաբաթներն անցկացնենք հեռակա ուսուցման մոդելի կիրառմամբ: Մենք գիտակցում ենք, որ այն իր հետ դժվարություններ կբերի: Հեռակա ուսուցումը նոր փորձություն է բոլորիս համար: Կալիֆոռնիայի և Լոս Անջելեսի գավառի կրթական գրասենյակները և մեր ղեկավար թիմն աշխատում է ամեն օր, այս նոր կրթական մթնոլորտին աջակցելու և լուծումներ գտնելու համար: Այս որոշումն ընդունվել է Բրբենք քաղաքի համայնքային անվտանգությունն ապահովելու համար: Մեր առջև դեռ հարցեր են կանգնած, որոնց պատասխանները պետք է գտնենք միասին: Հատկապես, այն մեծ ազդեցություն կունենա տարեվերջյան միջոցառումների և տոնակատարությունների վրա: Մենք կշարունակենք աշխատել ձեզ հետ այս իրադարձությունների ստեղծագործական տարերթակը գտնելու համար:

Ծնողներն ու աշակերտները.

Ուսուցիչները ձեզ հետ կապ կհաստատեն մանրամասների մասին խոսելու համար: Միաժամանակ, խնդրում եմ շարունակել ձեր և ձեր ընտանիքի առօրյա կրթական ռեժիմը պահպանելու համար: Խնդրում եմ նաև, հաշվի հառնել և համացանցից օգտվել կարգապահությամբ: Ահա մի քանի օգնող հղումներ ձեզ համար: Մենք գիտենք, որ այն դժվար է ձեզ համար, բայց մենք իրար հետ պետք է կատարենք այս անցումը:

1. Հեռակա ուսուցման կրթական ծրագիր. Բրբենքի Դպրոցների Միացյալ Ծրջանի կրթական հարթակը պատրաստ է սկսել իր գործունեությունը 2020 թվականի ապրիլի 6-ից սկսած: Ուսուցիչները կիրականացնեն դասավանդումը Գուգլ դասասենյակի միջոցով, որը համացանցային կրթական հարթակ է: Նրանք կապ կհաստատեն աշակերտների հետ և կներբեռնեն հանձնարարությունները այդ դասասենյակում: Մենք ակնկալում ենք, որ աշակերտներն ամեն օր կմտնեն Գուգլ դասասենյակ(ներ): Ահա թե ինչպես մտնել Գուգլ դասասենյակ. Google Classroom: Աշակերտի գաղտնագիրը

հետևում է այս օրինակին. Գաղտնագիր (Password). Աշակերտի 9 նիշ ունեցող անձնական գործի համարի վերջին 4 նիշը 2 անգամ կրկնված. օրինակ. (Եթե 9 նիշ ունեցող անձնական գործի համարը 9876854321 է, ապա գաղտնագիրը կլին. 43214321): Եթե որոշակի հարց ունեք Գուգլ դասասենյակի վերաբերյալ, խնդրում ենք նախևառաջ կապ հաստատել տվյալ դասի ուսուցչի հետ: Խնդրում ենք համբերատար լինել, քանի որ այն դասավանդման նոր մեթոդ է շրջանի համար: Լրացուցիչ ռեսուրսներ կան ծնողների համար հետևյալ կայքում.
COVID-19 Student and Family Digital Resource Center.

2. Կրթական նյութեր. Այն ընտանիքները, որոնց թղթե փաթեթներ են հարկավոր, կտեղեկացվեն դպրոցի կողմից, երբ այդ փաթեթները հասանելի կլինեն: Դրանք

այն ընտանիքների համար են, որոնք դրանց կարիքն ունեն և ոչ թե այն ընտանիքների համար, ովքեր գերադասում են: Դպրոցական շրջանը հնարավորություն չունի թղթե փաթեթներ տրամադրել բոլոր աշակերտներին:

3. Քրոմ նոթբուկներ (Chromebooks). Այն ընտանիքները, որոնց սարքեր են հարկավոր Գուգլ դասասենյակ մտնելու համար, տեղեկություն կստանան իրենց դպրոցից, թե ինչպես են դրանք բաշխվելու աշակերտներին:
Առաջնահերթությունը կտրվի ամենակարիքավոր ընտանիքներին: Եթե առաջին բաշխումից հետո դեռ սարքեր կունենանք, շրջանը կփորձի հատկացնել այն ընտանիքներին, որոնց հարկավոր է լրացուցիչ սարք:

4. Գնահատականներ, կրեդիտներ և կրեդիտների վերականգնում. Այս շաբաթ, դպրոցական շրջանը նոր ուղորդումներ է ստացել ուսումնական տարվեվերջյան գնահատման համակարգի վերաբերյալ: Այն մշակումից հետո, կհայտնենք ծնողներին և պահապաններին առաջիկա 2-3 շաբաթների ընթացքում: Խնդրում ենք գիտենալ, որ մենք հասկանում ենք, թե ինչպիսի ճնշում է սա առաջացնում աշակերտների մոտ: Մենք կմշակենք այնպիսի մոդել, որը կկենտրոնանա դասավանդման և կրթության վրա:

5. Բարձրագույն կրթություն. Բարձրագույն կրթության համակարգը նույնպես հայտարարություններ է կատարել ժամանակավորապես չեղյալ համարելով ընդունելության և ֆինանսական օգնության որոշ չափանիշները, համոզվելու համար, որ աշակերտները կարող եք ընդունվել այդ համալսարանները, ինչպես որ պլանավորել էին: Այդ հայտարարությունների հետ ծանոթանալու համար, սեղմել այս հղումները. Ա. University of California (UC) - Կալիֆոռնիայի համալսարան Բ. California State University (CSU) – Կալիֆոռնիայի պետական համալսարան Գ. Association of Independent California Colleges and Universities (AICCU)-Կալիֆոռնիայի անկախ քոլեջների և համալսարանների ասոցիացիա

6. Տեխնոլոգիական աջակցություն ընտանիքների համար. Այն ընտանիքները, որոնց մեր շրջանը տեխնոլոգիական սարք է հատկացրել և օգնություն է

հարկավոր կամ հարցեր ունեն Գուգլ դասասենյակի վերաբերյալ, պետք է լրացնեն այս դիմումնագիրը օգնություն ստանալու համար.
<https://forms.gle/NJcdUsESjaeBonrv9>

7. Լրացուցիչ ռեսուրսներ. Մենք շարունակում ենք կրթական ռեսուրսներ և աջակցություններ ավելացնել ծնողների և աշակերտների համար ԲԴՄՇ-ի կայքում Student and Family Resources: Խնդրում ենք նաև ծանոթանալ Ընդհանուր Հիմնական մամուլի (Common Core Media) նորությունների հետ.
<https://wideopenschool.org/>

8. Թույլտվություններ (Permits) – Միջշրջանային (Interdistrict permits) թույլտվությունները կարող եք լրացնել համացանցային դիմումնագրի միջոցով, Ուսնողական ծառայությունների (Student Services) կայքում.
<https://www.burbankusd.org/Page/2615>

Ցանկանում եմ շնոհակալություն հայտնել մեր ուսուցիչներին, աշխատակիցներին և աշակերտներին, որոնք զարմանալի ստեղծագործ մտքով և նվիրվածությամբ նպաստում են հեռակա ուսուցման հաջողությանը: Ծարունակելով աշխատել միասին, մենք կուժեղացնենք ԲԴՄՇ-ն: Թարմացումների հաջորդ թողարկումը կլինի հինգշաբթի օրը, ապրիլի 9-ին:

Հոգատարությամբ,

Մաթ

Դոկտոր Մաթ Հիլլ գետատեսուչ Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջա